ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2019/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ

ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 06.12.2019թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Հովհաննիսյան

Հ. Հունանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Սեղրակյան

«ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2019/3» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.

1. Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակիցների կողմից ԳՀ գնման ընթացակարգին ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում են բավարար:

2. «ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2019/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

«ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2019/3» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ ՖՆ պահանջվող էլեկտրոնային հասցեներին և ներկայացվել է «ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2019/3» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին պահանջվող տեղեկատվությունը:

Եզրակացությունը ստացվել է անբավարար: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ ս.թ. դեկտեմբերի 4-ին «Բագարանի Բարիք» ՓԲԸ -ին ուղարկվել է ծանուցում երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Բագարանի Բարիք» ՓԲԸ -ն ներկայացրել է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի՝ բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

3. «ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2019/3» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հրապարակում.

«ՀԱՊ-ԳՀԾՁԲ-2019/3» ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ -ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում:

Պայմանագիր կնքելու նպատակով ծանուցել մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Մասնակիցները 10 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնեն պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի ձևով և պայմանագրի նախագիծը:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

4. *Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.*

Լ. Հովհաննիսյան		*«Հայաստանի Ազգային Պատկերասրահ» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն/գնահատող հանձնաժողովի նախագահ/*
Վ. Հովհաննիսյան		*«Հայաստանի Ազգային Պատկերասրահ» ՊՈԱԿ-ի գլխավոր ճարտարագետ/ գնահատող հանձնաժողովի անդամ/*
Հ. Հունանյան		*«Հայաստանի Ազգային Պատկերասրահ» ՊՈԱԿ-ի տնտեսական բաժնի պետ /գնահատող հանձնաժողովի անդամ/*
Լ. Սեդրակյան		*Հանձնաժողովի քարտուղար*